**Մրցույթ՝ « ՀՀ Արարատի մարզի Խաչփարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՝ դասվար (18 դասաժամ), դասվար (17 դասաժամ), դասվար (17 դասաժամ), աշխարհագրություն (16 դասաժամ),բնագիտություն (2 դասաժամ),, բնություն (2 դասաժամ),, տեխնոլոգիա՝(տղաների խումբ՝ 3 դասաժամ), երաժշտություն (6 դասաժամ), ֆիզիկա (16դասաժամ), հասարակագիտություն (9 դասաժամ), կենսաբանություն (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (ձև 1),
-1լուսանկար 3x4չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատուն անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. **հոկտեմբերի 20**-ից մինչև **հոկտեմբերի 29**-ը ներառյալ ,ամեն օր՝ ժամը **10:00-ից 15:00**-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. նոյեմբերի 2-ին՝ ժամը 14:30-ին**, Խաչփարի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Խաչփար, 5-րդ փող. 15շ.: Տեղեկությունների համար զանգահարել 055131211 հեռախոսահամարով: